

# ԾԱՂԿԱՔԱՂ ՔԵՐԴՈՒԱԾՔ

## Դ Ր ՈՒ Ա Տ Ի Ք Դ Ր ՈՒ Ս Ո Ս Ի

Հանգուճատիպ զերդ թեւահերձըն պայտօնեայ շանթակիր,  
Ում գիցն արբայ իշխանութիւն շնորհեաց 'ի հաւրս թափառոտս'  
Հաւատարիմ գըտեալ 'ի փորձ Դիոսի  
Ի շիկահեր Գանիւմեղէս ,

Ի բունոյն ըզնա երբեմն արբունք տիոց քեցեաց առոյգ,  
Եւ հայրենին ոյժ կորովոյ՝ մինչ վաստակոց դեռ անհրմուտ .  
Եւ 'ի ցածնուլ տեղատարափ յորդ շառաշմանց ,  
Գարնանային այսք բըռնաշունչ՝

Ուսուցին երկչոտին թեւկոխել ճիգն անսովոր ,  
Եւ նոյնժամայն ոյժ հաստարուռն՝ յօղեաց պառակ վարեաց զոտխն ,  
Ապա զըրդեաց ըզնա մարտից տենչ և խորտկաց՝  
Ոգորելոց դէմ վիշապաց .

Եւ որգունակ 'ի դաշարիս զըւարթ յարօտ այժ 'ի ճարակ ,  
Որ գիշագէչ 'ի նորոց իցէ ժանեաց յօշելոց ,  
Չարդէն մոցեալ ետես առիւծն 'ի կաթանէ՝  
Եւ շիկագոյն մօրն 'ի ստենէ .

Այսգունակ և ըզ'իրուսոս՝ մըղել ըզմարտ ուժգնագոյն  
Առ բարձամբք Ալպեանց տեսին և Ռետացիք և Վինդելիկք ,  
Ոյց սովորոյթ՝ յամազոնեան 'ի տապար  
Ձինել ըզձեռս անգուլ անհետ ,

Ուստի՛ եկեալ թէ արդեօք՝ չեղեւ ինձ փոյթ որոնել .  
Նա՛ իսկ ոչ զամենայն օրէն երբեք իցէ գիտել .

Այլ յաճախ յաղթականաց գունդք յոգնահոյլ ,  
Ժիր պատանոյն պարտեալ հնարիւք ,

Եղեն խելամուտ թէ զինչ մարթեն միտք և ոգի՝  
Երջանկափառ ընդ յարկօք սընեալ 'ի վոյթ խնամոյ քաջիկ .  
Եւ զինչ թէ սիրտ հայրենական Աւգոստեայ  
Առ պատանեակսըն Ներոնս :

Բարեաց և հըգօրաց՝ են և ծընունդք զօրաւոր .  
Ի զուարակս և յերիվարս բնակէ ուժեղ հարցըն կորով .  
Եւ համբուն ոչ ըզվատարի աղանիս  
Ծնանին արծուիք ամեհագոյնք :

Այլ աճեցուն զործէ հրահանգ ըզընակաւորըն զօրութիւն ,  
Եւ ուղիղ օրէնք վարուց՝ կորով 'ի լանչս հաստատեն .  
Ապականեն ախտք ըզբընիկ բարութիւն՝  
Ուր թէ խըրատք պակասիցեն :

Քանի շնորհաց թէ պարտական ես դու, Հըռովմ, Ներոնեանց,  
Գեղածիծաղ օրն այն պայծառ՝ յոր ցընդեցաւ .

Խաւար յերկրէն լատիոնէ,  
Որ 'ի չըքեղ յաղթանակ հանդիսացաւ նախ առաջին,

Յորժամ զըժնէ Ափրիկեցին յիտալական 'ի քաղաքս  
Ասպատակեաց՝ իր 'ի կուենիս բոց մեծածախ,

Կամ Սիկիլեան յանդունդս Եւրոս,  
Անտի և այսր հռովմէականն անեաց առոյգ ժիր մանկութիւն

Յաղթական ցանգ արշաւանօք, և աւերեալ կործան տաճարք  
Ի վըրդովիչ խազմ՝ ամբարիշտ կարբեղոնեանց՝

Կանգուն յօտին կալան ըզդիս,  
Հուսկ ուրեմն՝ ասաց զրուժան և նենգաժոտն Աննիբաղ .

Եղլերուք՝ յառ և ապուռ մատնեալ գայլոց մեք քանասար,  
Պընդիմք ըզհետ յօժարական, յորոց խուսել

Է յաղթանակ չըքեղափառ :  
Ազգ այն հըզօր՝ որ 'ի Տոսկեան կոծեալ անդունդքս ծովածուփ,

Ի հըրդեհեալ իլիոնէ ըզնուիրական դրօշալլա դից  
Եւ զհինաւուրց հարց ալույթ և զորդեակս՝

Ա՛ժ յԱւսոնեան քաղաքանի,  
Չերդ իբրու յեսանասուր 'ի խիստ տապար յօտեալ սըղցի՝

ՅԱզիդէ յուրթի բերրի նըսեմաստուեր սաղարթուց,  
Յերկաթոյն առնու ոգի և զօրութիւն՝

Ի նախճիրս և 'ի վընաս :  
Ոչ իսկ իդրա սաստկագոյնս հատեալ մարմնովն ինչ ամեհեաց

Ընդդէմ Հերակլեայ՝ որ ընդ նուածիլն էր զըժկամակ .  
Ոչ ընկճեցին կոթիսացիք զահեղն հըրէշ՝

Եւ ոչ թեբէք էգիոնեան :  
Ի խորըս թէ սուզանիցեն՝ չըքնաղազոյն յառնէ կանգնի .

Թէ մարտիցեն ըզյաղթականն արկցէ տապաստ մեծ պարծանօք .  
Եւ մըղեսցէ գուպարայաղթ պատերազմունս

Կանանց 'ի լուր հըւշակելիս :  
Ո՛չ, ոչ ևս այլ 'ի կարբեղոն առաքեցից հրեշտակս յոխորտ .

Հատաւ ըսպառեցաւ ամենայն յոյս ակընկալեաց,  
Անչըքացաւ և մերս անուան բաղդ և պարծանք,

Ի մեռանել Աստուբալայ :  
Լիցին, այո, գամագիտ ձեռք զօրաւորք կըլաւդեանց,

Ոյց և Դիոս պաշտպանէ իւր մարդասէր տեսչութեամբ,  
Եւ հանճարեղ հոգ խընամոց տան օճան

Յանձուկ վըտանդըս մարտից :

ՈՐԱՏԻՈՍ

ԹԱՐԿԵ . Հ . ՅՈՒՂ . ԹՈՐՈՍԵԱՆ